ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«17» 01 2017թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ _____ Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-84/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 և 01.11.2016թ. թիվ 03/73-3/24707-16 գրություններով ներկայացված «Մեդպրո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02626144) և «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 1657100780) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն), ՀՀ պաշտպանության նախարարության 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրության հիման վրա,

30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 և 01.11.2016թ. թիվ 03/73-3/24707-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Մեդպրո» ՍՊԸ-ին և «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերը նշված մասնակցին Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերը նշված գրությամբ Կենտրոնին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրության պատճենը:

Կենտրոնը 20.10.2016թ. թիվ 01/04.2/3841-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Մեդպրո» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքերի բացակայությունը:

Սակայն, ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 124-րդ կետի 2-րդ ենթակետով, 01.11.2016թ. թիվ 03/73-3/24707-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Մեդպրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Մեդպրո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Մեդպրո» ՍՊԸ-ն 27.09.2016թ. Կենտրոնին ուղղված թիվ 09/8179-16 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցելիս որևէ խախտում թույլ չի տվել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքները համարժեք են եղել հրավերի տեխնիկական բնութագրով

պահանջվող ապրանքներին: Ընկերությունը նշել է, որ համարժեքության վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու համար դիմել է ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրելով տրամադրել նշված վիրաբուժական թելերի համարժեքության մասին փորձագիտական եզրակացություն՝

1. Վիկրիլ պլյուս- համարժեք Դար-Վին պլյուս /Էրգոն Էստ/
2. Էտիլոն-համարեք Սուտրոն /Էրգոն Էստ/
3. Պրոլեն- համարժեք Սելեն /Էրգոն Էստ/
4. Վիրաբուժական թել մետաքսյա, ասեղով /Silk/- համարժեք մետաքսյա թել /Шелк/ /Էրգոն Էստ/
5. Ցանց ճողվածքի համար, կիսաներծծվող, ախտահանված 6x11- համարժեք Սորբիմեշ ESM06011 6x11:

Ի պատասխան Ընկերության վերոնշյալ հարցման՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 13.09.2016թ. ԱԿ/22.2/9941-16 գրությամբ հայտնել է, որ նշված արտադրանքները գրանցված չեն ՀՀ-ում, բացակայում են դրանց գրանցման փաստաթղթերի փաթեթները, որոնք պարունակում են այդ բժշկական արտադրանքների ստեղծման, փորձարկումների իրականացման պայմանները, անվտանգությանն ու արդյունավետությանը վերաբերող այլ տվյալներ:

«Մեդպրո» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով 09.11.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-84/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը: Նիստի ընթացքում Ընկերության ներկայացուցիչը պնդեց, որ Ընկերությունը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցելիս որևէ խախտում թույլ չի տվել, ինչպես նաև հայտնեց, որ այն հանգամանքը, որ իր կողմից տվյալ ընթացակարգերի շրջանակներում ներկայացված ապրանքները գրանցված չեն ՀՀ-ում ամենևին էլ խոչընդոտ չի հանդիսանում դրանք իրացնելու համար, քանի որ Ընկերությունը տվյալ Ընթացակարգերին մասնակցելու նպատակով առաջարկել է ոչ թե դեղորայք, այլ կարանյութեր, որոնց գրանցված լինելը պարտադիր չէ:

3. «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 03.06.2016թ. N 01/04.2/2156-16 գրությամբ դիմել է «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ին, սակայն վերջինիս կողմից պատասխան չի ստացվել:

«Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 09.11.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-84/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Կենտրոնում 09.11.2016թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած ՍՑ-ԳԲԽ-84/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

5. ՍՑ-ԳԲԽ-84/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 և 01.11.2016թ. թիվ 03/73-3/24707-16 գրություններով ներկայացված «Մեդպրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու

պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտեր է ներկայացրել «Մեդպրո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն), որը իր կողմից ներկայացված հայտերի Հավելված 4.1-ով՝ տեխնիկական բնութագրերով առաջարկել էր կարանյութեր:
- «Մեդպրո» ՍՊԸ-ն հայտերի Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություններով հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտերով առաջարկվող ՝ 22, 24 25 27 29 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով ընթացակարգերի հրավերներով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:
- Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները 22.01.2015թ. ժամը 11:00-ին և ժամը 11:15-ին կայացած նիստերի թիվ 4 արձանագրությունների համաձայն՝ «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում ներկայացված հայտերը մերժվել են՝ հրավերների տեխնիկական բնութագրերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:
- «Մեդպրո» ՍՊԸ-ն 27.09.2016թ. Կենտրոնին ուղղված թիվ 09/8179-16 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցելիս որևէ խախտում թույլ չի տվել, քանի որ վերջինիս կողմից ներկայացված ապրանքները համարժեք են եղել հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքներին: Ընկերությունը նշել է, որ համարժեքության վերաբերյալ պաշտոնական պարզաբանում ստանալու համար դիմել է ՀՀ առողջապահության

նախարարությանը՝ խնդրելով տրամադրել նշված վիրաբուժական թելերի համարժեքության մասին փորձագիտական եզրակացություն՝

1. Վիկրիլ պլյուս- համարժեք Դար-Վին պլյուս /Էրգոն Էստ/
2. Էտիլոն-համարեք Սուտրոն /Էրգոն Էստ/
3. Պրոլեն- համարժեք Սելեն /Էրգոն Էստ/
4. Վիրաբուժական թել մետաքսյա, ասեղով /Silk/- համարժեք մետաքսյա թել /Шелк/ /Էրգոն Էստ/
5. Ցանց ճողվածքի համար, կիսաներծծվող, ախտահանված 6x11- համարժեք Սորբիմեշ ESM06011 6x11:

- Ի պատասխան Ընկերության վերոնշյալ հարցման՝ ՀՀ առողջապահության նախարարությունը 13.09.2016թ. ԱԿ/22.2/9941-16 գրությամբ հայտնել է, որ նշված արտադրանքները գրանցված չեն ՀՀ-ում, բացակայում են դրանց գրանցման փաստաթղթերի փաթեթները, որոնք պարունակում են այդ բժշկական արտադրանքների ստեղծման, փորձարկումների իրականացման պայմանները, անվտանգությանն ու արդյունավետությանը վերաբերող այլ տվյալներ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է, որ Ընկերության կողմից *նշված արտադրաքների համարժեքության վերաբերյալ հիմնավոր եզրակացություն տալու համար չկան բավարար հիմքեր:*
- Կենտրոնը 20.10.2016թ. թիվ 01/04.2/3841-16 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրության հիման վրա «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում ներկայացրել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Մեդպրո» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու բավարար հիմքերի բացակայությունը:
- Ի պատասխան Կենտրոնի 20.10.2016թ. թիվ 01/04.2/3841-16 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.11.2016թ. թիվ 03/73-3/24707-16 գրությամբ հանձնարարել է Կենտրոնին նախաձեռնել «Մեդպրո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությամբ ներկայացված «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

- ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտեր է ներկայացրել «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):
- «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ն հայտերի Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություններով հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտերով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերի հրավերներով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:
- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովները 22.01.2015թ. ժամը 11:00-ին, ժամը 11:15-ին և ժամը 11:30-ին կայացած նիստերի թիվ 4 արձանագրությունների համաձայն՝ «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ի կողմից ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում ներկայացված հայտերը մերժվել են, քանի որ մասնակիցը չի ներկայացրել հրավերի տեխնիկական բնութագրերով պահանջվող արտադրողի /կամ արտադրողի անունից հանդես եկող պաշտոնական ներկայացուցչության/ կողմից մասնակցին տրված ապրանքի որակի և մատակարարման երաշխիքային նամակ՝ ավտորիզացիա:

6. ՍՑ-ԳԲԽ-84/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 և 01.11.2016թ. թիվ 03/73-3/24707-16 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության 20.05.2016թ. թիվ ԴՎԱ/1365 գրությունը և կից փաստաթղթերը, «Մեդպրո» ՍՊԸ-ն 27.09.2016թ. թիվ 09/8179-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

1. Կարգի 124-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը քննարկում է կենտրոնի կողմից ներկայացված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու հիմքերի բացակայության վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայնության դեպքում՝

1) դադարեցնում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու նպատակով նախաձեռնած գործընթացը և տեղեկացնում դիմող պատվիրատուին.

2) հակառակ դեպքում կենտրոն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության առարկությունները և պահանջում նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում տվյալ մասնակցին ներառելու ընթացակարգը:

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ***դեղը***՝ դեղաբանական և (կամ) իմունաբանական և (կամ) նյութափոխանակային ակտիվությամբ օժտված մարդկային և (կամ) կենդանական և (կամ) բուսական և (կամ) քիմիական և (կամ) կենսատեխնոլոգիական ծագման միջոց է՝ համապատասխան դեղաչափով և դեղաձևով, անհրաժեշտ փաթեթավորմամբ և մակնշմամբ, որը նախատեսված է կիրառել մարդկանց և

կենդանիների հիվանդությունները բուժելու, կանխարգելելու և (կամ) օրգանիզմի ֆիզիոլոգիական ֆունկցիաները փոփոխելու, վերականգնելու, կարգավորելու համար կամ ներմուծվում է մարդու և կենդանու օրգանիզմ հիվանդությունը ախտորոշելու նպատակով:

Նույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն ***դեղերը***, որոնք գրանցված են Հայաստանի Հանրապետությունում, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

ՀՀ կառավարության 01.05.2013թ. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 2-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով հաստատված *դեղերի գնումների պլանում ընդգրկվում են միայն Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից սահմանված՝ Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկում և Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում (ռեեստր) ընդգրկված դեղերը:*

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցության հայտերի Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություններով «Մեդպրո» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտերով առաջարկվող՝ 22, 24, 25, 27 և 29 չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով ընթացակարգերի հրավերներով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

ՀՀ առողջապահության նախարարության 13.09.2016թ. Մեդպրո ՍՊԸ-ին ուղղված ԱԿ/22.2/9941-16 գրության համաձայն՝ Ընկերության կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում Ընկերության կողմից առաջարկված վիկրիլ պլյուս՝

(համարժեք Դար-Վին պլյուս /Էրգոն Էստ/), էտիլոն (համարժեք Սուտրոն /Էրգոն Էստ/), պրոլեն՝ (համարժեք Սելեն /Էրգոն Էստ/), վիրաբուժական թել մետաքսյա, ասեղով /Silk/՝ (համարժեք մետաքսյա թել /Шелк//Էրգոն Էստ/) և ցանց ճողվածքի համար, կիսաներծծվող, ախտահանված 6x11՝ (համարժեք Սորբիմեշ ESM06011 6x11) արտադրանքները գրանցված չեն ՀՀ-ում, բացակայում են դրանց գրանցման փաստաթղթերի փաթեթները, որոնք պարունակում են այդ բժշկական արտադրանքների ստեղծման, փորձարկումների իրականացման պայմանները, անվտանգությանն ու արդյունավետությանը վերաբերող այլ տվյալներ, **հետևաբար բավարար հիմքեր չկան նշված արտադրանքների համարժեքության վերաբերյալ հիմնավոր եզրակացություն տալու համար:**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ ՀՀ առողջապահության նախարարության 13.09.2016թ. ԱԿ/22.2/9941-16 գրության՝ ***բավարար հիմքեր առկա չեն*** «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում ***առաջարկված արտադրանքների համարժեքության վերաբերյալ հիմնավոր եզրակացություն անելու համար,*** Կենտրոնը գտնում է, որ նման պայմաններում «Մեդպրո» ՍՊԸ-ի կողմից Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունը վերոնշված մասով չի կարող դիտվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալի ներկայացում և առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 և 01.11.2016թ. թիվ 03/73-3/24707-16 գրություններով ներկայացված «Մեդպրո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02626144) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

Ինչ վերաբերում է ՀՀ ֆինանսների նախարարության 01.11.2016թ. թիվ 03/73-3/24707-16 գրությամբ ներկայացված այն դիրքորոշմանը, համաձայն որի ՀՀ-ում չգրանցված բժշկական արտադրանքների ներկայացումը նույնպես դիտարկվում է որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, ապա հայտնում ենք, որ Ընկերության կողմից վերոնշյալ ընթացակարգերով առաջարկվել է այնպիսի ապրանք (կարանյութեր), որը «Դեղերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես դեղ, ուստի և ՀՀ կառավարության 01.05.2013թ. «Հայաստանի

Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» N 502-Ն որոշման 2-րդ կետի պահանջները կիրառելի չեն տվյալ իրավիճակում:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումներ կատարելու ընթացակարգերին մասնակցելու նպատակով հայտեր է ներկայացրել «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ն և հայտերի Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարություններով հայտնել և հավաստել է, որ իր կողմից ներկայացված հայտերով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերի հրավերներով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները 22.01.2015թ. ժամը 11:00-ին, ժամը 11:15-ին և ժամը 11:30-ին կայացած նիստերի թիվ 4 արձանագրությունների համաձայն՝ «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ի կողմից ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/13», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/14» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/16-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/15» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում ներկայացված հայտերը մերժվել են, քանի որ մասնակիցը չի ներկայացրել հրավերի տեխնիկական բնութագրերով պահանջվող արտադրողի /կամ արտադրողի անունից հանդես եկող պաշտոնական ներկայացուցչության/ կողմից մասնակցին տրված ապրանքի որակի և մատակարարման երաշխիքային նամակ՝ ավտորիզացիա:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 23-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար:

ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. թիվ 667-Ա հրամանով հաստատված հրավերիների օրինակելի ձևերի Հավելված 6-ի՝ Պայմանագրի 3.4.5 կետի համաձայն՝ ***Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել Պայմանագրի N1 և N2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:***

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը պարտավոր է արտադրողի /կամ արտադրողի անունից հանդես եկող պաշտոնական ներկայացուցչության/ կողմից տրված ապրանքի որակի և մատակարարման երաշխիքային նամակ՝ ավտորիզացիան պատվիրատուին ներկայացնել իր կողմից առաջարկվող ***ապրանքի մատակարարման փուլում***, իսկ Պատվիրատուն Ընկերության հայտը՝ արտադրողի կողմից տրված ապրանքի որակի և մատակարարման երաշխիքային նամակի՝ ավտորիզացիայի բացակայության հիմքով անբավարար է գնահատել դեռևս ***հայտերի գնահատման փուլում***, ուստի գտնում ենք, որ Ընկերության կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ի կողմից հայտերի Հավելված 4.1-ով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությունները չեն հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում:

Այսպիսով, Կենտրոնն արձանագրում է, որ «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ի վերաբերյալ առկա չեն Ցուցակում ներառելու գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերից որևէ մեկը և առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 30.05.2016թ. թիվ 1/73-3/15258-16 գրությամբ ներկայացված «Տրանսնացիոնալ ֆարմացևտիչեսկայա կոմպանիա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 1657100780) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների վերապատրաստման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-84/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Եղիազարյան